ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 30-31-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Գևորգյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017 թվականի հոկտեմբերի 30-31-ը

4. **Հրավիրող կողմը՝** Եվրասիական զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Եվրասիական զարգացման բանկի կողմից կազմակերպվող «Եվրասիական ինտեգրում» 12-րդ միջազգային կոնֆերանսին »

6. **Քննարկված թեմաները՝**

ա) «Եվրասիական ինտեգրում՝ լճացու՞մ, թե զարգացում» խորագրով տեղի ունեցան մի շարք հետաքրքիր զեկույցներ և քննարկումներ: Այդ թվում հարկ է նշել երկուսը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի նախագահ՝ Տիգրան Սարգսյանի և ՌԴ ռազմավարական հետազոտությունների Կետրոնի Խորհրդի նախագահ՝ Ալեքսեյ Կուդրինի ելույթները, որոնք ներկայացրեցին իրենց համոզմունքը այն մասին, թե ինչը կարող է խթանել և զարգացնել տնտեսությունների ինտեգրումը (Տ. Սարգսյանը ՝ Եվրասիական Տնտեսական Միության շրջանակներում, իսկ Ա.Կուդրինը՝ նաև ՌԴ ինտեգրումը համաշխարհային շուկայում) և ինչի՞ բացակայության դեպքում դժվար է ակնկալել զարգացման բարձր տեմպեր. այն է՝ **անդամ պետությունների որոշակի սուվերեն իրավունքների լիազորումը ԵՏՀ-ին** (ՌԴ-ի դեպքում նաև Համաշխարհային Առևտրային Կազմակերպությանը):

բ) Կլոր սեղան ՝ թեմաներ.

1. Տնտեսական զարգացման հեռանկարները և մարտահրավերները, Ինդուստրիա 4.0-ի մարտահրավերները:

Բիզնես կառույցների և ընկերությունների ղեկավարների, գլխավոր տնտեսագետների կողմից ներկայացվեցին օրինակներ տնտեսության թվայնացման հետևանքով առաջացող զարգացումներից արտադրության և ծառայությունների արդյունավետության շեշտակի բարձրացումը, սակայն դրա հետ մեկ տեղ առաջանում են նոր խնդիրներ և հարցեր՝ աշխատողների մեծ քանակի կրճատումներ, որոշակի մասնագիտությունների անհրաժեշտության վերացում, բազմակողմանի և բարձր որակի նոր մասնագետների ապահանջարկի առաջացում և այն:

2. « Եվրասիական զարգացման բանկի հատուկ դերը ենթակառուցվածքային ծրագրերում»

Նախաձեռնողների պահանջարկները, նախապատրաստման մեխանիզմները, ֆինանսավորման գործիքները և ռիսկերի բաշխումը թեմաներով: Ներկայացվցին մի շարք կոնկրետ դրական ազդեցություն ունեցող արդյունավետ ներդրումային ծրագրեր:

7. Այլ

ա) Ծագած անհրաժեշտությունից ելնելով, նախարարի հանձնարարությամբ, տեղի է ունեցել նաև հանդիպում ՌԴ ֆինանսների նախարարության պետական պարտքի և պետական ֆինանսական ակտիվների Դեպարտամենտի տնօրեն՝ Կ.Վիշկովսկու հետ, որի ընդացքում քննարկվեց «Հայաստանի հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի կիրառման հետ կապված հարցեր:

բ) Տեղի է ունեցել նաև քննարկում ՌԴ ֆինանսների նախարարության միջազգային ֆինանսական հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն՝ Ա. Բոկարևի հետ, որի ընդացքում կրկին անդրադարձ է կատարվել «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի շրջանակներում մատակարարված ապրանքների գների մեջ ԱԱՀ-ի կիրառման վերաբերյալ խնդիրներին և ձեռք է բերվել պայմանավորվածություն բուն խնդրին հետագայում հնարավոր դրական լուծումներ տալու համար:

8. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական՝ Արմեն Գևորգյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը

08.11.2017թ.